

3921

ՊՐԵԼԵՎԱՐԵՑԻ ԲՈԼՈՐ ՀԵՆՔԵՐԻ, Մ ԽԱՑԵԲԸ!

# ԼԵՆԻՆԱԿԱՆԻ

## ՄԱՆԿԱՐԱՆԱԿԱՆ ԿԱՐԻՆԵՏԸ

ՀԱՄԱՌՈՒՏ ՏԵՂԵԿԱՆՔ

151.9  
L-35

1934 թ.

Հրատ. Լենինկա կ. Տեղարդի տպարան Էլեմբուկանով պատ. 615  
տիրաժ 300 որ.

Պրոլետարիատի բնույթի և կացելի

L-35  
ՄՐ

14 JUL 2009

ԼԵՆԻՆԱԿԱՆԻ

ՄԱԿԱՐԱՆԱԿԱՆ ԿԱՔԻՆԵԾԸ

ՀՀՀՀ  
1006  
28347

ՀԱՄԱԴՐԱ ՏԵՂԵԿԱՆՔ

1934 թ.



Հրատ. Ենթակա Տեղաբան կանխականամ պատ. 615  
տիրաժ 300 սր.

## ԵՐԻՒԱԿԱՆԻ ՄԱՆԿԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՐԻՆԵՏԸ

Խորհրդային իշխանությունից առաջ ել մեղանում պատահում ելին մարդիկ, վորոնք լսել ելին «մանկաբանություն»—«պեղոլոգիա» բառը և իմանում ելին, վոր հեռավոր Ամերիկայում և Յիվրոպայում ինչ-վոր «մանկաբանական» հետազոտումներ են կատարվում։ Սակայն հազիվ թե լինելին մարդիկ թե Հայաստանում, թե ամբողջ Անդրկովկասում, վորոնք ժիրենց աշխավը տեսած լինելին», թե ինչ բան ե այդ մանկաբանական աշխատանքը։

Խորհրդային կառավարության որով ե, վոր առաջին քայլերն են արվում այս ուղղությամբն Անդրկովկասում, նաև—Վրաստանում և Աղրբեջանում և ապա նաև Հայաստանում։ Դեռահաս սերնդի մանկաբանական հետազոտման գործի հիմնադրումն ու կաղմակերպումը անշուշտ Խորհրդային կառավարության նվաճումներից մեկը պիտք ե համարվի կուլտուրական շնորհարության ասպարիցում, —մի նվաճում, վորի կարեվորությունը գընալով ավելի ու ավելի ընդունվում ու շեշտվում ե ժամանակի ընթացքում։

Այդ կարևոր գործի ողակներից մեկն ե Սանկաբանական Կարբինետի հիմնարկվելը Լենինական կայարանում։

Լենինականի Յերկաթուղական Սանկաբանական Կարբինետը գոյություն ունի Լենինական կայարանի Դեռահասների Առողջության Պահպանման Կայանին կից (Պոնք Օքրան Յձօրօյ և Պօրօտկօ—Օ Յ Դ Ա Պ)։ Կարբինետը հիմնարկելու հարցը 1929 թվի աշնանը հարուցել եր Թիֆլիսից՝ Անդրկովկասի Յերկաթուղիների Առվարչության (Դօրսան օդել) կողմից, բժիշկ Արշալույս Տ. Խորայելյանը Հայաստանի կուսառողկոմատի և ապա Յերկաթուղական Դպրոցների բաժնի առաջ։ Բժ. Տ. Խորայելյանի և Լենինականի վերոհիշյալ Կայանի այն ժամանակվա վարիչ Բժժկուհի Հեղինե Սարաջյանի կրկնակի դիմումներից հետո, 1930 թվի փետրվարին Յերեվանում վճռվեց Լեն. Սանկաբանական Կարբինետի բացման հարցը։ Անդրկովկասի կենտրոնից յեկած այդ դիմումներն, ըստ յերևույթին, վորոշ չափով նաև ընդհանուր նշանակություն ունեցան Հայաստանում մանկաբանական աշխատանքներին սկիզբ դնելու գործի համար։ Նրանք զարկ տվին Հայաստանի կարգը դնելու գործի համար։ Նրանք զարկ տվին Հայաս-

տանի Հուստողկոմատին նաև սեփական, Յերկաթուղու վարչությունից բոլորվին առանձին՝ մանկաբանական հիմնարկների կազմակերպմանը ձեռնարկելու: Այսպես, 1929 թվի դեկտեմբերին Յերկանում պաշտոնապես բացվեց Հուստողկոմատի Մանկաբանական հարինետը, և յերկու ամիս անցած, փետրվարին, Յերկաթուղական Դպրոցների Բաժնի վարիչ ընկ. Խնձրիյանի. կողմից կորպադրվեց Մանկաբանական Կարինետ բանալ Լենինականում:

Են. Մանկար, Կարինետի աշխատանքներն սկսվեցին 1930 թվի մարտի 1-ին:

Կաղմակերպչական և Փինանսական առևակետներով Լենինականի Յերկաթուղու Մանկաբանական Կարինետը կապ ունի թե Անդրկովկասի Յերկաթուղիների Առվարչության հետ՝ Լենինականի Դեռահամեների Առողջության Պահպանուան Կայանի միջոցով, և թե Հայաստանի Հուստողկոմատի հետ՝ Յերկաթուղական Դպրոցների Բաժնի միջոցովի իր կատարելիք աշխատանքների տարիկան արտադրական պլանը Կարինետը սովորաբար մշակում է՝ խորհրդակցելով թե Անդրկովկասի Յերկաթ Առվարչության յենթակա Թիֆլիսի մանկաբանական հիմնարկների հետ, և թե Յերկանում՝ Յերկաթ. Դպրոցների Բաժնի ու մանկաբանական հիմնարկների հետ Իսկ իր կատարած աշխատանքների վերաբերմամբ Կարինետը պարբերաբար զեկուցում և հաշվետու յե մանրամասնորեն Հայաստանի Հուստողկոմատի առաջ՝ գլխավորապես Յերկաթուղական Դպրոցների Բաժնի միջոցով, և ավելի համառուս՝ Անդրկովկասի Յերկաթուղիների Առվարչության առաջ՝ Դեռահամեների Առողջության Պահպանման Լենինականի Կայանի միջոցով: Իր աշխատանքների արտադրական պլանին վերաբերող խնդիրներին Կարինետը, իհարկե, իրավեկ և անում նաև դպրոցները, հաշվի առնելով դպրոցական աշխատավորների առաջարկներն ու Կարծիքները:

Իր գործունեյության մեջ Կարինետն աշխատակցում և Դեռահամեների Առ. Պահպանման Են. Կայանի բուժ. կազմին և Են. յերկաթուղական կրթարանների մանկավարժական կազմին: Կարինետի աշխատանքները սերտորեն կապակցվում են այդ յերկու հարմինների առողջապահական—սանիտարական և ուսումնական—դաստիարակչական գծերովը տարգող աշխատանքներին:

Իր աշխատանքները Կարինետը վարել և Մոսկվայի և Լենինգրադի մանկաբանական գիտահետազոտական և համապատաս-

խան հիմնարկների ծրագրներին և ողերատիվ գործնական աշխատանքների որինակներին հետեւելով: Խորհրդային այդ կարեցին կենտրոնների աշխատանքներին Կարինետը շարունակ ըստ Թացիկս և յեղիկ և իր վարիչի յերկու անգամ Մոսկվա և Լենինականում պաշտոնապես բացվեց լաբորատոր առաջնային բարեկամությանը լինելով թե զիալեկտիկա կազմականությանը շարունակ հետամուտության վերաբերյալ հիմնարկների հիմնարկների վերաբերյալ ընդհանուրապես, կան մատերիալիզմի հիմնարկների լինինյան գծովն ընդհանուրապես, թե հատուկ մասնագիտական մանկաբանական գծով:

Իր գոյության առաջին տարին Կարինետն աշխատել և միայն յերկու աշխատակցով՝ վարելը (Սիրական Տիգրանյան): 1931 թվի վերաբերյան մանկավարժը (Հրանուշ Արգարյան): 1931 թվի վերաբերյան աշխատավարչը ելի մեկ մանկաբան մանկավարժ աշխատակից (Տիգրանյուհի Ռազմական): Ներկա 1933 տարվա ոպոստուց Կարինետի անձնական կազմը բաղկացած ե չորս աշխատակիցներից՝ վարիչը (նույնը), յերկու մանկաբան մանկավարժեցներից՝ վարիչը (նույնը), յերկու մանկապատուիչ (Հաղիկին և Աղաջանյան) և մեկ մանկավարժ (Արմենակ Վոսկանյան):

Կարինետն սպասարկում և Լենինականի յերկաթուղու դըպոցական և նախադպրոցական կրթարանների յերեխաներին: Բացի այդ՝ Հարվածայնության կարգով՝ նա աշխատանքը և տարեկան կայունականից գուրսը՝ Աղին, Ղարաբիլիսա և Սանահին ըել նաև Լենինականից գուրսը՝ Աղին, Ղարաբիլիսա և Սանահին կայարանների յերկաթուղական կրթական հիմնարկներում: Կայարանների գծով կարենետը բավարարում և Լենինական քաղաքի նաև վոչ-յերկաթուղական կրթական հիմնարկների գիմունիսները: Միայն մեկ գեպը ուժ կարինետն անկարող յեղավ, ժամանակ չունենալու պատճառով, այդ անել լենինականի և Մանկապարտեզի խորհրդի դիմումը՝ քննարկման յենթարկել իր 18 սաներին, վորոնք աշխիք ելին ընկնում վարքի ու մտավոր զարգացման վորոշ աննորմալություններով:

Սուածին տարին Կարինետի աշխատանքներում կենտրոնական տեղը յերեխաների մատավոր «ոժտվածության» տեստարկումն եր բանում (тестирование умственности одаренности) կամ մտավոր զարգացման տեստարկումը: Հայտնի մեթոդիկայով վորոշում ու զարգացման տեստարկումը: Հայտնի մեթոդիկայով վորոշումը (JQ): Խնձրի 1931 թվից, մանավանդ զարգացման վորպիսությունը (JQ): Խնձրի 1931 թվից, մանավանդ կուսակցության կենտրոնի պատմական զեկավար հրահանգների ուղ-

զությամբը, Կարինեան իր աշխատանքներն ավելի սերտարեն ու գործնականորեն կապեց յերկաթուղական դպրոցների ընթացիկ ուսումնական-դաստիարակչական աշխատանքներին ու պետքերին, թեև «ոժտվածության» տեսարկումներն ելի շարունակվեցին: Կարինեան այդ ուղղությամբ ավելի ծավալից ու խորացըրեց աշակերտության ուսումնական առաջադիմության քննարկման իր նախընթաց աշխատանքները՝ նպատակ դնելով աշակեցել դպրոցական մանկավարժական աշխատանքների ուսցիունալիքացիային, մանկաբանականացմանը (պեղուղղիքացիային), գործնական ու կենդանի մասնակցություն ունենալ ուսուցման վորակի բարձրացման ու տեմպի համար դպրոցում մղվող պայքարում: Իր այս աշխատանքները Կարինեանը կատարում ե վոչ թե Կարինեանի (Կայանի) շենքումը, այլ համապատասխան դպրոցի գասանենյակներում: Կարինեանը զորոշ չափով իր վրա յե վերցրել «դպրոցական մանկաբանների» կատարելիք ֆունկցիաները, քանի վոր այդպիսի հատուկ աշխատողներ զեռ չկան մեր դպրոցներում (Մուկվայի և Լենինգրադի դպրոցներում գեռ տարիներ առաջ սկսել են աշխատել դպրոցական մանկաբանները): Մեր աշխատանքների այս թեքման կապակցությամբ կարիք ենք ըզդացել, վոր դպրոցում մի սենյակ հատկացվեր Կարինեանը:

Իր գոյության այս մոտ յերեք և կես տարիների ընթացքում լեն. Մանկաբանական Կարինեաը, մինչև այս նոյեմբեր ամիսը, կատարել ե գեռահասների մտավոր զարգացման մոտ 3650 տեսարկում Կարինեատում և աշակերտների ուսումնական առաջադիմության մոտ 19.000 քննարկում դպրոցներում:

Ենք «ոժտվածության» տեսարկման, և ուսումնական առաջադիմության քննարկման իր աշխատանքներով ուսումնականաշխարակչական պրոցեսի կոնկրետ պետքերին սպասարկելիս՝ լեն. Կարինեաը ձգտել ե, իր ուժերի սահմաններում, գիտական մոտեցում ունենալ բոլոր խնդիրներին, գիտահետազոտական սկզբունքներով զեկավարվել և ձեավորել իր անելիքները, աշխատակցել ուսման և ուսուցման մեթոդների գիտական, մանկաբանորեն լուսաբանման և բարեփոխման կարեոր գործին—միշտ աշքի տոաջ ունենալով, վոր նաև մեր գիտական—մանկաբանական աշխատանքները պետք ե սպասարկեն կոմ. Կուսակցության գլխավոր գծի կենսազործմանը, կապակցվեն սոցիալիստական շինորարության պահանջներին, ծառայեն դասակարգային պայքարի շահերին:

Դեռահասների մտավոր «ոժտվածություն» ու զարգացումը անհատ-անհատ քննարկելու (տեսարկելու) համար, ինչպես հայտնի յե, կան մի քանի տեսասկալաներ: Այդ բոլորի անդրանիկներից ամենից ավելի միջազգային, գրեթե համաշխարհային ընդունելություն գտածը՝ Բինեյի և Սիմոնի ֆրանսական ակադեմիաների սկալայի մի քանի վարիանտները կանանդըրի սկալանը, ամերիկաները, գերմանականը, ուսուականները լիականը, ամերիկաները, գերմանականը, ուսուականները (որ. Շուբերտի, Սոկոլովի), Լենինականի Կարինեատը կանգ առաջ Բինեյի սկալայի այն վարիանտի վրա, վորը գլխավորագիս գործապիւմ էր Մոսկվայի և Լենինգրադի մանկաբանական հիմնարկների կողմէց. դա Բինե-Շերտի տեսարկալաները<sup>1)</sup>: Լենինականի Կարինեատում նաև համեմատեցինք Բինեյի և Սիմոնի ըստ կանի Կարինեատում գտագայում Սոկվայում հրատակում բակվաց նաև Բինե-Շերմենի վարիանտը<sup>2)</sup>: Մենք շարունակում բակվաց նաև Բինե-Շերտի տեսարկալան գործադրել թարգմանենք ելի Բինե-Շերտի տեսարկալան գործադրել կայերեն դրա յեկ բուն տեսերը, և ահստարկելու հրահանգներովը:

Այդ սկալան անհատաբար քննարկելու տեսերից ե բազմացած: Զարգացման խմբովի (կուկատիվորեն) տեսարկման հակացած: Զարգացման միբովի (կուկատիվորեն) տեսարկման համար առաջին տարին կարինեատը գործադրել և նոսովիմոյի տեսարեն իրենց հրահանգներովը:

Մտավոր զարգացման տեսերի ընտրությունն անելիս՝ լեն. Կարինեաը, ինչպես ասվեց, Մուկվայի և Լենինգրադի հեղինակավոր հիմնարկների ընտրածն ընդունեց: Այդ տեսերը Լենինականի հայ յերեխաների վրա գործադրելու համար պետք եր, ինարիկ, «թարգմանել հայերեն—ուսերենից (Փրանսերենից կամ անգլիերենից), վոր և կատարեց լեն. Կարինեատը: Բայց այս թարգմանելը» շատ անգամ սովորական թարգմանության նման չեր լինելու:

Լեն. Կարինեատի ընդունած սկալայում (Բինե-Շերտ) կայն այնպիսի տեսեր, վորոնք կարելի յեր պարզապիս թարգմանել: Որինակ. քառակուսի (կվաղբատ) կամ ոուր ընդունած:

<sup>1)</sup> Տես՝ Ելոնսկի, Իօնսա, Լևինսկի, Շեյման, «Методика педагогического обследования детей школьного возраста». Изд. 2-ое. Гиз. 1929. Стр. 66—88.

<sup>2)</sup> Տես՝ Գուրյանով, Սմիրնով, Սոկոլով, Շևիրեվ, «Скала Бина—термена для измерения умственного развития детей». Рабпрос. Москва. 1930 г.

կել տալու տեսաը. չորս կամ յերեք հատ իրեր հաշվել տալու տեսաը. բաժանված ուղղանկյուն քառակողմի մասերն իրար միացնելու տեսաը, և այն:

Բայց նույն սկալայում այնպիսի տեստեր ել կային, վորոնք պետք եր զոչ թե պարզապես բառացի թարգմանել, այլ փոխադրել: Որինակ. ընդամենը վեց վանկերից բաղկացած չորս բառանի ուստի ին նախագանությունը կըկնել, տալու տեսաը: Վեց վանկեց բաղկացած այդ առաւերեն նախադասությունը հայերեն ելի չորս բառով թարգմանելիս՝ կարող ե ավելի կամ պակաս թվով վանկերից կազմած նախադասություն ստացվել, վորով տեսաը կփոխվի եյտպես: Կրկնելիք նախադասության վանկերի ընդհանուր թիվն այտեղ փոխել չի կարելի, վորովհետեւ դա տվյալ տեստի եյտպան հանդաւ մանքներից մեկն ե: Տեսան, ուրեմն, պետք ե զոչ թե բառացի թարգմանվեր, այլ փոխադրվեր, և այնպես, վոր հայերեն նախադասության և բովանդակությունը, և վանկերի թիվը այլալեզու բնադրին նույնը՝ լինելին:

Սկալայում այնպիսի տեստեր ել կային, վորոնց փոխադրելը ավելի խոշոր ու եյտպան ձետափոխման հետ եր կապված՝ հայոց լեզվի առանձնահատկությունները հաշվի առնելու անհրաժեշտության պատճառով: Որինակ. տեստարկվողին տալիս ենք մի նախադասության բառերն անկարգ, խառնու խուռը դրված. տեստարկվողը պիտի գլխի ընկնի, թե ինչ կերպ, ինչ հերթավորությամբ պետք ե տրված բառերն ասել, վոր այդ խանդարված բառակաւյտից կանոնավոր շարահյուսված նախադասություն ստացվի: Նախադասությունը ամեն լեզվում հորինվում ե վորպես մի կապակցված ամբողջություն: Բայց տարբեր լեզուներում տարբեր են նախադասության հորինման ձեերն ու միջացները: Բառերի կառակցության մի շարք ձեեր կան՝ օրինակ, նոխադասության բառերի շարադասության կարգը, անունների և բայերի ձետպան փոփոխությունները (հոլովական, խոնարհման), բառերի համաձայնության ձեերը (որ ըստ սեռի, հոլովի, թվի), խնդրառությունը, նախդիրները... Այս լեզվական ձեերը տարբեր լեզուներում տարբեր են և տարբեր չափերով են կերպավում: Այս բոլորի նետանքով տարբեր լեզուներում բառերի կառակցությունը նոխադասություն մեջ տարբեր ձեվերով ե, մտնավանդ, առընթե չափերով և արտահայտված. միենույն նախադասությունը միանույն բառերով միտեսակ խանդարված վեցրած՝ սոերենում, Փրանսերենում, հայերենում նույնպիսի և իրար հավասար տեստ չի լինի, մեկ լեզվով

ավելի հեշտը կհանդիսանա, մյուսովն—ավելի գժվարը: Ուրեմն, այս գեպքում փոխադրելիք տեսաի բնագրի որինակից տարբեր ու նախադասություն պետք ե վերցնել և հորինել բայց այնպես, վոր մշտկված հայերեն տեսաը ուստական, քրանսական և անդական համապատասխան տեստին հավասար լինի: Ուրեմն նինեյի սկալայի այս, ինչպես և նաև տեսակի տեստերն առնասարակ, վոչ թարգմանվելու եյին բառացի, զոչ ել պարզորեն փոխադրվելու եյին, այլ, ինչպես վոր անզացիք անգլերենացրել են նինեյի գրանսերեն այդ տեսաը, իսկ ուստաները ուսերենացրել այնպես ել մենք պետք ե հայերենացնեյինք:

Բայց՝ միայն ամեն տվյալ լեզվի առանձնահատկությունները չեն, վոր պետք ե նկատի ունենալ տեստերը մեկ լեզվից ու յերկրից մի այլ լեզվից ու յերկիր փոխադրելու: Վոչ պակաս, նույնիսկ ավելի մեծ չափով պետք ե հաշվի առնել տվյալ ամբողջ միջառվայրի ու կենցաղի, մանավանդ տեստարկվող դեռահասի անմիջական շրջավայրի, առանձնահատկությունները: Վորոշ յերևույթանը իրեր, փաստեր, բառեր, վորոնք սովորական կամ ծանօթ են մի փարիզաբնակ տեստարկվողի համար, կարող են անսովոր կամ մնանալու լինել մի մոռկվացի կամ մի լենինականցի տեստարկվողի համար: Ըստ այսմ տեստեր ել կան, վոր պետք ե տեղայնացվեն, լոկալ ձեռով վերահսրինվեն, սակայն այնպես, վոր դրանց բնույթին ու դժվարության կամ հեշտության չափը պահպի նաւյնը, ինչ վոր «թարգմանվելիք» բուն տեստինն ե:

Թարգմանելու, փոխադրելու, ձետպանելու այս պատասխանառու աշխատանքը կատարելիս՝ լինինականի Մանկաբանական կարինեալը իր ձեռքի տակ չուներ պատրաստի օրինակներ, վորոնք ընդորինակել կամ փոխանել կարողանար: Այս գործը բոլորվին նոր բան եր հայկական միջավայրում և Հայաստանում, մանավանդ սրանից յերեք տարի առաջ. և լինինականի կարինեալը այս աշխատանքը կատարեց ինքնակա կերպով: Տեստերի իր կատարած սկզբնական թարգմանությունը կարինեալը ապա վերամշակեց ու բարեփոխեց՝ իր առաջին ամիսների տեստարկումների փորձից ոգավելով:

Տեստերի տեղայնացրումը և առնավարակ ձետպանումը, ինչպես ենոր տեստերի մշտկումը, մի լուրջ ու պատասխանառու զործ ե, վորը, բավարար չափով ու վատահելի վորակով կատարվելու համար կարուտ վոչ միայն ավելի լայն շրջանի ու հեղինակավոր հիմնարկների, այլ նաև ավել ձեռնամ ու կարող ուժերի գործակ-

Կության, քանի ինչ վոր կենինականի կաբէնետն և ներկայացնում։ Հայերեն տեստերը մշտկելիս պետք է, բացի հայաստանի մանկացանական հիմնարկների փորձից, նկատի ունենալ նաև Վրաստանի և Ադրբեջանի նման փորձերը, քանի վոր այնտեղի մանկաբանական հիմնարկներն ել հայերեն տեստեր են կիբառում հայ յերեխաների տեստարկելիս (որ. Թիֆլիսում, Բագվում), Հայերեն տեստերի մեծ մասում, անշուշա, միատեսակություն, միորինակություն և լինելու թե Հայաստանի, թե Վրաստանի և թե Ադրբեջանի համար։

Բացի հայերենացնելուց տեստերը նաև քրդերենացնելու, թթքերենացնելու, ասորերենացնելու խնդիրներ կան մեզանում, վորոնք վորոշ արդիություն (ակտուալություն) ունեն վոչ թե առհասարակ Անդրկովկասի համար, այլ նաև հենց Հայաստանում, քանի վոր այստեղ ել քուրդ, թուրք, ասորի յերեխաների տեստերի կարիքն և լինում։

Եթե պահանջ կա, վոր Հայաստանում գործող մանկաբանական հիմնարկները իրար գործակցեն՝ մտավոր զարդացումը քընարկելու հայերեն տեստերը մշակելու զործում, ապա այդ գործակցումը անհրաժեշտ ե ընդարձակել Անդրկովկասյան մաշտարով՝ թե հայերեն և թե թթքերեն, քրդերեն, ասորերեն տեստերի մշակման համար։ Այս բոլոր գեպքերում յեվ հետաքրքրական, յեվ ուսանելի կինի ոգտագործել տեստերը նաև զրացերենացնելու փորձը, վոր ունեն մշակած զրացիները։

Այսպիսի գործակցության կարիքն ու անհրաժեշտությունը գիտակցելով, կենինականի կարինետը մի քանի անգամ հարուցել և այդ խնդիրը թե կուսող կումատի Յերկաթուղական Դըպրոցների Բաժնի և թե Յերկանի կենտրոնական Մանկաբանական Ինստիտուտի առաջ։

Ինչպես ասացի, թեև վերջին յերկու տարին կարինետի աշխատանքների խոշոր մասը աշակերտության ուսումնական պատրաստության և առաջխաղացման քննարկման վրա յենք կենտրոնացրել, բայց յերեխաների մտավոր զարգացման անհատաբար տեստարկումները ելի շարունակվել են կենինականի կարինետում։

Պետք ե նկատի ունենալ, վոր մեր տեստարկած աշակերտության խոշոր տոկոսը նորմալ «ուժութածության» զեռահասներ հանդիսացան, ինչպես և ապրիորի կարելի յեր սպասել Այնպես

վոր՝ տհատարկած դեպքերի մեծ մասը մեաց ալս կողմովը առանց անմիջական գործնական արդյունքի և ոգտագործման։ Այն ինչ ամեն մեկ անհատական տեստարկումը իր վորոշված ձեր արձանագրման հետ մոտավորապես 30-45 րոպե ժամանակ և պահանջում մեկ աշակերտի մտավոր զարգացումը քննարկելու համար։ Ուստի կեն. Կարինետը այժմ անպատճառ տեստարկում և այն բոլոր աշակերտներին, վորոնց մասին դպրոցի կողմից այդպիսի առաջարկումում լինում և կամ վորոնց զերաբերմամբ վորեւ կամկած և ծագած լինում, թե արդյոք ինչ աստիճան նորմալ և զբանց մտահասակը (J). Բացի դրանից կարինետն իր կողմից ծրագրել ե, վոր կենինականի Յերկաթուղական կրթական հիմնարկներում կրթվող ամեն գեռահաս գոնե մեկ անգամ տեստարկված լինի, իսկ թույլ կամ անբավարար մտավոր զարգացում (JQ) հանդես բերողները — նաև վերատեստարկվեն ամեն 1-2 տարին անգամ։

Կարինետը պատրաստել և տպագրել ե տվել հատուկ ձեր «Անձնական քարտեր», վորոնցից մեկ-մեկ հատը հատկացվում և յուրաքանչյուր տեստարկվողի։ Քարտում նշանակվում են գեռահասի աղքանունը, անունը, հայրանունը և ծնվելու թվականը (տարեթիվը, ամիսը և օրաթիվը) և ապա ժամանակագրական կարգով արձանագրվում են տվյալ գեռահասի բոլոր հաջորդական տեստարկումների թվականներն ու արդյունքները, այլ և նրա կըրթական աստիճանների հաջորդական ընթացքը։ Այս քարտերովը, ուրեմն, պարզվում և յուրաքանչյուր գեռահասի մտահասակի (J) հաջորդական փոփոխութերի ընթացքն ու վորակը (դինամիկան), վորը մանականդ կարենոր և վորոշել և նկատի ունենալ անբավարար կամ անհաստատ մտավոր զարգացում հանդես բերող դեռահասութեաների վերաբերմամբ։

Աշակերտության ուսումնական առաջարկմությունը քննարկելու գործում կեն. Մանկաբանական կարինետը նախ թարգմանել ե, փոխադրել ե, տպագրել ե տվել ու գործադրել ե Սոսկայում և կենինագրադում նույն նպատակներով գործադրվող հետեյլ ստուգողական առաջադրանքները։

1930-31 ուս. տարում կարինետը թարգմանեց և տպագրել տվեց կենինագրադի Դետский Обследовательский Институт-ի (ДОБИ) այժմ-Լենինգրադский Областной Детский Институт(ЛОДИ), «Լուս կարգալու» («Чтение про себя») տեստը (16 փոքրիկ հողվածներից բաղկացած), ոգտվելով դրա միջանի վարիանտներից։

«Հույս կարդալու» այս տեստովը քննաթրկում են կարդացածը հասկանալու կամ հասկանալով կարդալու (մտառու ընթերցանության) վարժվածության աստիճանը։ Նույն թվին Կարինեսը թարգմանեց և տպագրել տվեց ՏՕԲԻ-ի (ԼՕԴԻ) իր իսկ մշակած թվաբանական 20 խնդիրների տեստը, ՏՕԲԻ-ի հրատարակած Ստուդի 12 թվաբանական խնդիրների տեստը, այլ և Վուդիի հայտնի միջազգային տեստերը (թվաբանական չորս գործողությունների որինակներ), որովհետով վորպես աղբյուր Մոսկվայի և Լինչինգրադի մանկաբանական հիմնարկների հրատարակած տախտակներից։

ՏՕԲԻ-ի խնդիրները, Վուդիի որինակները և մասամբ «Հույս կարդալու» տեստերը նույնը լինելով, ինչ վոր գործադրվում են Մոսկվայում և Լենինգրադում, կարելի յե լինում մեր քննարկումների արդյունքները Մոսկվայի և Լենինգրադի գործոցներում կատարված քննարկումների արդյունքների հետ համեմատել և մեր գործոցների համապատասխան խմբերի ուսումնական պատրաստության վիճակը համեմատել Մոսկվայի և Լենինգրադի դպրոցների աշակերտության ուսումնական պատրաստության հետ տվյալ առարկաների գիտելիքների շրջանում։ Այս տեստերը բնագործությունը գործադրել ենք գործոցների և ավելի բարձր խմբերում։

Ուսումնական պրոցեսի վիճակի կոնկրետ ընթացիկ քընարկման համար կարելուրությունն են ներկայացնում մանավանդ ստուգողական այն առաջադրանքները, վորոնք կարինետն ամեն տարի հորինել և տարբեր խմբերի աշակերտության ուսումնական առաջադիմության գրությունը հայոց լեզվից (ընթերցանություն և ուղղագրություն) և թվաբանությունից (խնդիրներ և հաշվումներ) քննարկելու համար։ Այդ առաջադրանքները հորինելիս Կարինետն աշքի առաջ և ունեցել, թե տվյալ քննարկվելիք խմբերում տվյալ ժամանակում տվյալ առարկայից ինչ գիտելիքներ են ավանդված յեղել փաստորեն, այլ և թե ինչ պահանջներ են դրված այդ մասին մեր լուսադրությունը հրատարակած վերջին ուսումնական Մրագրում։ Նախապես ներկա յենք լինում քննարկվելիք առարկաների դասերին համապատասխան խմբերում՝ ավելի կենացնի, վորոշ ու կոնկրետ տեղեկություն ունենալու համար աշակերտության ուսումնական պատրաստության և ուսման ներթական ետապի մասին։ Այս ստուգողական առաջադրանքների բովանդակության ու ձեռ մասին մեծ մասամբ նաև խորհրդակցվում է համապատասխան դաստուների հետ։

Այս քննարկման աշխատանքները վորեվե հանուկ տեսակի սարքավորանք չեն պահանջում. գործադրվում են սովորական դպրոցական դիդաքտիկ պիտույքները՝ պլակատներ առաջադրանքներով, թուղթ, մատիտ . . . :

Այս քննարկումները Կարինետը կատարել ե մեծ մասամբ առաջին աստիճանի խմբերում. բայց կատարել ե նաև յերկրորդ կոնցենտրի խմբերում։

Ինչպես ասվեց, գործոցական ամեն մի հաջորդական խմբի համար առանձին ստուգողական առաջադրանքներ ենք մշակում, վորոնցով և միատեսակ քննարկում ենք ամեն տվյալ հաջորդական խմբի բոլոր գործընթաց խմբերը։ Քննարկումը կատարվում է դպրոցում, գրավոր և խմբովի։ Աշակերտների հարյուրավոր գրավոր աշխատանքները քննում, ուսումնասիրուս ենք Կարինետում։ Յուրաքանչյուր քննարկման արդյունքները, —յուրաքանչյուր առարկայինը, աշակերտին ու խմբին առանձին, —արտահայտում ու ամփոփում ենք թվականորեն, արձանագրում ենք խըմբական ցուցակներում, կաղմում ենք հասուկ ձևերի տախտակներ, վորոշում ենք միջին թվաբանականները (M) և մեղիանաները, տոկոսականներն ենք հաշվում, խմբերը ունդագրում ենք ըստ առաջադիմության վիճակի—վորակի։

Այս քննարկման արդյունքները սրբեկտիվ յեղանակներով ու ցուցանիշներով յերեան են բերում ու ներկայացնում աշակերտության ուսումնական առաջադրիմության պատկերը։

Քննարկման արդյունքները զեկուցվում են համապատասխան խմբերի սեկցիայի կամ դասատուների ժողովի նիստերում խորհրդակցման և կարծիքների փոխանակման առարկա յեն դառնում, և մեթոդական ու ծրագրական խորհրդապությունների ու հրահանգումների համար առիթ ու նյութ են տալիս։ Կատարված քննարկման յերեան բերած տվյալներն ու հանդամանքները առաջարկվում են ոգտագործվելու առաջիկայութ ուսումնական պրոցեսում։ Քննարկման տվյալները հիմք են ծառայում աշակերտներին զուգընթացների միջև խմբավորելու և վերախմբավորելու համար . . .

Այս քննարկման արդյունքները նաև հետ մնացող աշակերտների համար կարենոր տվյալներ են ընձեռում, վորոնք, նույն աշակերտների մտավոր զարգացման վորակի տեսարկման ցուցաների հետ, նկատի յեն տառնվելու այդ գեռահասների զըժվար կրթելի լինելը և ոժանդակ գործոցի թեկնածու լինելը վորոշ

լու գեղքում: Այս գծով մտադրություն կա մոտ ապագայում կենինականում մի ոժանդակ դալրոց հիմնարկել՝ թե քաղաքի և թե յերկաթուղու բոլոր դպրոցների համապատասխան աշակերտների համար՝ Յերկաթուղական Դպրոցական Բաժնի և կենինականի կուսրաժնի միասնական զեկավարությամբ:

Այստեղ և այժմ չենք կարող հարկավոր հանգամանորեն նկարագրությունն ու բացարձությունը տալ աշակերտության ուսումնական առաջադիմության մեր այս և նման քննարկումների հիմքերի, բովանդակության, տեխնիկայի, մեթոդիկայի, մանկավարժական պրոցեսի համար ունեցած և ունենալիք նշանակության ու այլ մի շարք կարեվոր հարակից խնդիրների մասին: Կմատնանշեմ միայն հետեւյալը:

Այս տեսակի քննարկումները կոչված են ոբյեկտիվ յեղանակով յերեվան հանել՝

1) աշակերտության ուսումնական առաջադիմության ստատիկան—ունեցած ուսումնական պատրաստության վիճակը ավագ քննարկման ժամանակակետում (որինակ, սեպտեմբերին կամ դեկտեմբերին), և

2) աշակերտության ուսումնական առաջադիմության դինամիկան—մի վորոշ ժամանակամիջոցի ընթացքում կատարված ուսումնական առաջխաղացման տեմպը (որ. առաջին կիսամյակի ընթացքում, կամ մեկ ամբողջ ուս. տարվա ընթացքում):

Այս տեսակի քննարկումները զարկ են տալիս դպրոցի ուսումնական աշխատանքի արտադրողականության բարձրացմանը, առհասարակ այդ աշխատանքներն իրենց վորակի և տեմպի կողմից բարվոքելու գործին, վորը մի հրամայական պահանջ և կուսակցության կողմից վճռականորեն դրված բոլոր լուսաշխատավորների առաջ:

Միայն այս տեսակի քննարկումներովը կարելի յե թե առանձին դպրոցների ու առանձին խմբերի կատարած աշխատանքի իրական ընթացքի և արդյունքների խսկական հաշվառքն ու որայեկարի գնահատումն անել, և թե տարբեր դպրոցներն ու տարբեր խմբերը այս կողմից իրար հետ համեմատել: Միայն այս տեսակի քննարկումներովը կարելի յե այդ հաշվառքն ու գնահատումը ստանդարտային ձեվով ու մաշտաբով կատարել: Այս տեսակի քննարկումներով կարելի յե վորոշել մի խմբի տարեցտարի հաջորդաբար կատարած ուսումնական առաջխաղացման չափը, այլև տարբեր տարիների նույնաստիճան խմբերի ուսումնական պատ-

բաստության աստիճանը իրար հետ համեմատել:

Անհրաժեշտ է, վոր աշակերտության քննարկումները ավելի մեթոդավոր մշակվեն, ձեւակերպվեն, ավելի սխսթեմավոր կիրառվեն և շատ ավելի ընդարձակ շրջանում ծավալուն, միորինակ գործադրվեն, քան ինչ վոր մինչեւ այժմ ե յեղել—վորչափ կարելի յե բազմաթիվ դպրոցներում, յեթե վոչ բոլորում:

Այս առիթով ու նպատակով լեն. Մանկաբանական կարինեալ ամառը (Հ99, 9VII թ.) գիմել եր կուսմովկոմիսարին՝ հրավիրելով նրա ուշադրությունը այդ կարեվոր գործին: Սա մի գործ է, վորի կիրառման հանգամանքները պետք ե մշակվեն վոչ թե միայն մեկ տեղական մանկաբանական հիմնարկում, ինչպիսին կենինականի կարինետն է, այլ կենտրոնական մանկաբանական հիմնարկի և դրա ձեռներեցությամբ կազմակերպվող կոնֆերանսների կողմից: Իսկ քննարկումն այդպիս մշակված ձեւերով դըպրոցներում ծավալուն գործադրելը կարու և վորոշ վարչական կարգադրությունների և հրահանգների՝ արդեն կուսմովկոմատի կողմից:

Այստեղ, վորպիս նմուշ, համառոտակի հիշատակեմ մեկ՝ յերկուսը լեն. Պարինետի այն աշխատանքներիցը, վորոնք սերտուրին կապված են յեղել այդ ուսումնական առաջադիմության քըննարկման կիրարկմանը՝ առնչակից լինելով դպրոցների ուսումնական պատրիարքական պրոցեսի պետքերը սպասարկելու մեր ծրագրին:

Խմբերը գպրոցում ռացիոնալ կազմելու, աշակերտներին խմբերում ռացիոնալ խմբավորելու գործը և տեսականորեն, և գործնականում պարզված ե ու կիրառվում և Մոսկվայում և Լենինգրադում: Իսկ մեզանում դեռ հարկ յեղած ուշադրությունը չի գրավել Սա մի լուրջ գործ է, վորի մասին անհնար և այս գեկուցման մեջ միջանկյալ խոսքով բավարարն ասել: Դեռ 1930 թ. կարինետը այդ խնդիրը արծարել ե լեն. յերկաթուղական դըպրոցներում: Կարինետի մասնակցությամբ այս դպրոցներում խըմբավորման միքանի գեղքեր են արվել: Բերեմ դրանց մեկ որինակը:

Ինչպիս պարզեցին մեր քննարկումները ներկա և անցած ուս. տարիների սկզբին, առաջին խմբերը նոր ընդունվող յերեխաների մոտավորապիս 20-30 տոկոսը արդեն սեպտեմբերին գրագետ ե լինում ավելի կամապակաս չափով, իսկ 40-ից վոչ պակաս

տոկոսը թվաբանությունից պատրաստված և լինում՝ գումարումից և հանումից առաջին տասնյակի սահմանում։ Այս կարեւը հանգամանքը բոլորովին անտեսվում և մեզանում, և նույնիսկ այն դպրոցներում, վորտեղ մի քանի գուգընթաց առաջին խմբերը կան, այս խմբերը կազմվում են «պատահականության կարգով»։ Միենույն գուգընթացում միասին նստում ու սովորում են, որինակ, յեվ քիչ թե շատ գրագետ, յեվ բոլորովին անգրագետ յերեխաները, այն ինչ գրադիտություն սովորեցնելու և յեղանակը, և՛ ընթացքն ու տեմպը, և պահանջվող արդյունքները բոլորովին տարբեր պիտի լինեն բոլորովին անգրագետների և կիսագրագետների վերաբերմամբ։

Այս բոլորն աչքի առաջ ունենալով, մեր Կարինեալ ակտիվ մասնակցում և դպրոցներում նոր աշակերտների ընդունելու գործին։ Հենց ամեն տարեսկզբին Կարինեալը քննարկում և բոլոր նորըներին, և իր կատարած քննարկումների տվյալների հիմամբ՝ դրանց յերկու կարգի առաջին խմբերում և բաշխում։ Կազմվում են «պատրաստվածների» խմբեր։ Խոսքն այստեղ յերեխաներին դպրոցում խմբավորելու միայն մեկ հիմքի մասին և ինչպես հայտնի յեւ, խմբավորումը նաև ուրիշ հանգամանքներ պետք է նկատի ունենալ։

Ուսումնական պատրաստության տարեսկզբի այս քննարկված մեթոդիկայում մեր Կարինեալը զեկավարվում և ևնինգրադի ֆերցենի անգան Մանկաբանական ինստիտուտի կողմից հանձնարարված և Սոսկվայում ու Լենինգրադում գործադրվող որինակներովիլ<sup>1</sup>)։

Հիշատակեմ նաև առաջին խմբերում («անպատրաստների» խմբերում) անգրագետ սկսնակ աշակերտների գրագիտության ուսուցման յեղանակը մեթոդապես բարեփոխելու փորձը, վորը մշակվեց Կարինետում 1931 թվին և կիրարկվեց լենինականի յերկաթուղական յերկու դպրոցներում 1932/33 և 1933/34 ուս. տարիների առաջին կիսամյակներում։ Այս բարեփոխված յեղանակի մասին ել Կարինեալի կողմից վերոհիշյալ գրությամբ հայտնվել եր Լուսուղկոմիսարին։

Ենթադրվում եր, վոր անցած սեպտեմբերի վերջին Կարինետի կողմից զեկուցվելու յեր այդ յեղանակի, ինչպես և աշակեր-

1) Տե՛ս՝ Սեմեոնova-Բոլտյոնova, „Об'ективный учет успешности в навигационных группах трудовой школы“ Гев. 1930 г.

տության ուս. առաջադիմության քննարկման հիմնական խնդրի մասին՝ Լուսուղկոմատի համապատասխան գիտական-մեթոդական կենտրոնական հիմնարկում (Լուսուղկոմատի Դարրոցական Սեկտորի գրությունը Լեն-Մանկաբանական Կաբ. Վարիչին՝ №18-03 7 ոգոստոսի 1933թ.):

Թերեւ նաև Գետհամալսարանին ու Մանկաբանական ինստիտուտին հետաքրթական լինի լսել կարինեալի բացատրական գելուցումները և՛ անգրագետ յերեխաներին գրագիտություն սովորեցնելու հրշված յեղանակի մանկաբանական և մանկավարժական-մեթոդական հիմունքների մասին, և՛ աշակերտության ուսումնական առաջադրմության քննարկումների ծրագրի, տեխնիկայի, կազմակերպման և նշանակության մասին։

1006  
28347

ՀԴՀՀ

Խոսքն առաջին խմբերի գրագիտական վիճակի մասին լինելով, ուրախությամբ արձանագրենք, վոր 1932/33 ուս. տարվա առաջին կիսամյակի գրագիտացման արդյունքներն այդ խմբերում ավելի լավ վիճակում եյին, քան նախորդ տարիներում։ Որինակ, 1932 թվի հունվարին մեր դպրոցներում առաջին խըմբերի աշակերտները դեռ այնքան անպատրաստ ու անվարժ եյին գրելում, վոր խմբովին քննարկելու յեղանակը հնարավոր չեր կիրառել. մենք ստիպված եյինք անհատ-անհատ քննարկել աշակերտներին։ Իսկ 1933 թվի հունվարին առաջին խմբերը (տարեսկզբին անպատրաստ խմբերը) արդեն այնքան եյին վարժ գրում, վոր առանց դժվարության խմբովին քննարկվեցին։ Հուսով ենք, վոր ներկա ուս. տարվա առաջին կիսամյակի արդյունքներն ել այս կողմից լավը կիրառեն։ Այս վորոշակի նվաճումը Մանկաբանական Կարինեալը վերագրում և վորոց չափով նաև իր աշխատանքներին։ Հիշատակենք, վոր ուսումնական առաջադրմության վորոշ բարձրացում նկատվում և այս վերջին տարիները մեր դըպրոցների նաև մյուս խմբերում առհասարակ։

Դպրոցների առաջին խումբը մտնող նորեկ աշակերտների, ուրեմն մոտավորապես 8 տարեկանների, վորոշ մասը արդեն գըրագետ և լինում ու տասի սահմանում գումարում-հանում իմանում եւ Հայտնի յեւ, վոր 7 տարին լրացրած յերեխաների համար այդ գիտելիքների յուրացումը դժվարություն չի ներկայացնում, մանավանդ յեթե ուսուցման գործը վորոշ կերպով վարվի՝ մեթոդիկայի և աշխատանքը կազմակերպելու կողմից։ Այս հանգա-

մանքները, մեր կուլտուրական շինարարության պահանջներն և Մոսկվայի ու կենցնգրադի որինակն աչքի առաջ ունենալով՝ արինեալ 1931 թ. աշնանը Յերկ. Դպր. Քաժնի առաջ հարց եր՝ Կարուցել 7 տարին լրացրած յերեխաների համար մեր մանկա- պարտեզներում զերո խմբակներ կազմակերպելու մասին, հանձն առնելով հատուկ մեթոդական ղեկավարությունը։ Դոլրոցական Բաժնի կողմից հավանություն ստացավ Կարինեալի այդ առա- ջարկը և համապատասխան կարգադրություն արվեց մանկապար- տեզների վարիչներին։ Բայց այս գործը մնաց անկատար՝ ման- կապարտեզների պերսոնալի ու շենքի պակասության դատճառով։

Տարիքն, ինչպես հայտնի յե, դեռահասների վարքն ու հասունությունը վորոշող հանդամաֆքներից մեկն ե։ Դեռահասի հասունության աստիճանի («հասակի») և «տարիքի» (ապրած տարիների) հարաբերությունը՝ նրա հոգեբնախոսական վոր- պիսությունը բնոր շող ցուցիչներից մեկն ե։ Հասկանալի յե, ուրեմն, թե մանկավարժական-մանկաբանական տեսակետներով վորչափ անհրաժեշտ ե ճիշտ ու ճշգրիտ տեղեկություններ ունե- նալ ամեն մի աշակերտի ծնվելու տարվա, ամսի ու որաթվի- մասին։

Սակայն, դժրախտաբար, այս խնդիրն իր բավարար լուծու- մը չեր ստացած մեր կրթական հիմնարկներում։ Իրենց շատ սա- ների ու աշակերտների տարիքն իսկի հայտնի չեր լինում ման- կապարտեզների ու դպրոցների աշխատակիցներին։ Շատերի տա- րիքն եւ թեյեվ հայտնի յեր համարվում, բայց անվորոշ եր մնում, թե ինչ առջյուրից եր հայտնի յեղել։ Վոմանց տարիքն ել նշանակված եր լինում լոկ ծնողների ըերանացի, հիշողությամբ արված ու չստուգված հայտարարության հիմամբ։ Վոմանց ծնվե- ու միայն տարեթիվն եր ստույգ հայտնի, իսկ ամիսը անհայտ (հայտնի թերի եյին լինում տվյալները նույնիսկ Զազսի տված միքանի վկայականներում)։

Այս կարենվոր խնդիրն իր այդ անբավարար վիճակից զուրս ըերելու համար, կեն Մանկաբ. Կարինեալը դեռ 1930 թվին մշա- կեց, գծագրեց և առաջարկեց դպրոցների ու մանկապարտեզների վարիչներին մի հատուկ հրահանգ և տախտակ, վորի ձեզով խընդ- քեց խումբ-խումբ քարտ աշակերտների համար արձանագրել, թե յուրաքանչյուրը քարտ աշակերտների համար (տարի, ամիս որաթիվ) և ծնվել և թվա- կանն ու համարը այն փաստաթղթի, վորից քաղված են այդ

տվյալները, այլև փաստաթուղթը տվող հիմնարկի անունը։ Նաև հետադա տարիներում Կարինեալը շատ անգամ հոգ և տարել վոր դպրոցներն ու մանկապարտեզներն ունինան իրենց բոլոր սանե- րի տարիքի լրիվ ու ճիշտ, պաշտոնական վավերագրերով վկայ- ված տվյալները։ Թեյեկ վորոշ առաջադիմություն այս գործում նկատելի յե, բայց դեռ ելի բավարար չափով չի լուծված այս խնդիրը մեր կրթարաններում։

Անցած ուս. տարում Կարինեալը նախագծեց կենինականի Յերկաթուղական Դպրոցների բոլոր 44 խմբերում մինսույն խը- բում յերկրորդ տարին մնացած աշակերտների ուսումնասիրու- թյունը կատարել մեր Կայանի բժշկական և մանկաբանական կազմի, դպրոցների մանկավարժների, այլև հատուկ աշխատակիցների գործակցությամբ։ Ծրագրեցինք այդ աշակերտներին բոլո- րին ինթարկել հատուկ բժշկական և մանկաբանական քննար- կումների, պարզել դրանց սոցիալ-կենցաղային պարմանները, կազմել մանկավարժական բնութագրերը, և այդ բոլոր տվյալնե- րի միասնական արդյունքներով՝ յերեվան բերել յերկրորդ տա- րին նույն խմբում մնալու պատճառները։

Բժշկական և մանկաբանական քննագրելումները կատարվե- ցին։ Մանկավարժական բնութագրերն ել կազմվեցին։ Բայց սոցկենցաղային պայմանների ուսումնասիրությունը մնաց ան- կատար։

Բժշկական և մանկաբանական քննարկումները պարզեցին, վոր մեր յերկրորդ, տարեցիների վերաբերմանը բիոլոգիական ֆակտորը չե կարեռ գեր կատարողը։ Յեկ քանի վոր հետամնա- ցության պատճառները սովորաբար բիոլոգիական և սոցիալական ֆակտորներում են վարունում, ապա կարելի յե լիզրակացնելով յենթալյել, վոր մնացնում ել ինչպես վոր պարզել են նման ու- սումնասիրությունները Սոսկվայի և կենինգրագի համար, յերկ- բորդ տարեցիության գլխավոր պատճառները այդ աշակերտների սոցիալ-կենցաղային պայմանների մեջ պետք ե տեսնել։

Կարինեալի աշխատակիցները կանոնավորապես մասնակցել են մեր դպրոցների խորհուրդների, սեղիաների, արտադրական ժողովների նիստերին։ Կարինեալը յերբեն նայեվ իր կողմից նիստի յե հրավերել այդ ժողովները։ Կարինեալը մասնակցել ե զեկուցումներով և դասախոսություններով նաև Յերկաթուղական

Դպր. Բաժնի կողմից Հարավային Գծի բոլոր յերկաթուղական գպրոցների պարբերաբար գումարվող ռայոնական կոնֆերենցիաներին:

Ան. Մանկաբանական Կարինետի վարիչը վորպես անդամ մասնակցում և Յերկաթուղական Ռայոնական Մեթոդական Բյուրոյի աշխատանքներին:

Մանկաբանական գիտելիքներն ընդհանրապես և մասնակիապես լենինականի Կարինետի աշխատանքները, սրանց ծրագրները և արդյունքները՝ մասսայականացնելու գծով՝ մեր աշխատակիցները կատարել են մի շարք աշխատանքներ։ Յերկաթուղական գպրոցների ու մանկապարտեղների շրջանակներում ունեցել ենք դասախոսություններ, զեկուցումներ ու զրույցներ—ծնողների, աշակերտության և մանկավարժների ժողովներում ու հավաքություններում—մանկաբանական, մեթոդական և առհասարակ պոլիտեխնիկ գպրոցին վերաբերյալ մանկավարժական թեմաների նվիրված։

Ավելի լայն շրջաններում մասսայականացնելու նպատակով՝ Գարինետը հոդվածներ եր զրել յեվ, Յերկաթուղական Դպրոցների Բաժնի միջոցով, ուղարկել եր մեր պարբերականների խմբադրություններին՝ մամուլում տպագրել տալու համար։ «Ժողովրդական Հուսափորության» 1931 թ. № 1 տպվեց մեր ինֆորմացիոն հոդվածը՝ «Մանկաբանական Կարինետը լենինականում»։ «Կոմունիստական լուսավորության» 1932 թ. № 1-2 տպվեց մեր հոդվածը «Նորեկ աշակերտների խմբավորումը լենինականի Յերկաթուղական գպրոցների առաջին խմբերում»։ «Կուլտուրական ֆրոնտին» ուղարկվել եր, բայց չեր տպագրվել, մեր հոդվածը՝ «Կոմունիստական լուսունքի ուղղագրությունը մեր գըպրոցներում»։ Այս վերջին հոդվածը հորինված եր մեր Կարինետի կողմից գպրոցների մի շարք խմբերում կատարված հատուկ քննարկման արդյունքների հիման վրա։ Մեր Կարինետի ու Դպրոցական Բաժնի կարծիքով այս հոդվածը կարող եր վոչհետաքրքրական ու անողուած չինել թէ հատկապես հայոց լեզվի և հասարակագիտության դաստուների, և թէ առհասարակ գպրոցական և կուլտուրական ֆրոնտի աշխատակիցների համար։

Կարինետի աշխատակիցները գործուղումներ են ունեցել զանազան ժամանակներում Մոսկվա, լենինգրադ, Թիֆլիս, Յե-

րեվան, համապատասխան մանկաբանական և մանկավարժական հիմնարկների աշխատանքների գրվածքին, ծրագրներին, յեղանակներին և կազմակերպմանը ծանոթանալու համար։ Բնականաբար՝ ավելի հաճախակի և մոտ ե յեղել Կարինետի հաղորդակցությունը Յերեվանի Կենտրոնական Գիտահետազոտական ախտկին Խնստիւտությունի հետ, վորի վարիչները—ընկ. Ա. Հովսեփյանը և ապա ընկ. Հ. Ինձիկյանը—միշտ ուշադիր են վերաբերվել մեր դիմումներին Մանկաբանական Խնստիւտությունի իրադիր ենք արել Կարինետի արտադրական պլանին, գործադրած տեսաերին, սուաջաղբանքներին, պլակատներին, առիթ ենք ունեցել միքանի անդամ մասնակցելու Խնստիւտությունը նիստերին Յերևանում։

Մանկաբանական տեսական և գործնական աշխատանքների կարեվորությունը խորհրդային յերկրներում վոչ միայն ընդունվում ե, այլ նույնիսկ առաջ և քաշվում ավելի քան Յեվրոպայում և Ամերիկայում։ Միայն Խորհրդային Խխանության որով ե, վորնախիկն Խուսական պետության յերկրներում մանկաբանական աշխատանքների համար լայն ու ընդարձակ ասպարեզ ե բացվել և, չնայած վոր համեմատաբար նոր բան և այս գործը մեղանում, բայց և այնպես մեր խորհրդային սոցիալիստական շինարարության հակ այս շրջանում արդեն կարելի յե մատնանշել ուշագրավ տուաշտիմություն ու խոշոր նվաճումներ, մանավանդ իդեոլոգիական և մկրտունքային ուղղությամբ։ Բազմաթիվ գիտական հետազոտող և ուսումնական հիմնարկներ, բազմաթիվ կարող ու պատրաստված ուժեր յեռանդով աշխատուել են այս ասպարեզում մանավանդ խորհրդային խոշոր կենտրոններում։ Մանկաբանական աշխատանքներ տարվում են և լուսուղկոմատի, և Առողկոմատի գծով, նաև ԵՇԽ-ի և Աշխժողկոմատի գծով։ Մանկաբանական աշխատանքների ծրագրները մշակվում, վերամշակվում, խորացվում ու ընդարձակվում են, զրանց կիրառումը գնալով ավելի ու ավելի աջողակ ու արդյունավետ ե դառնում։

Մանկաբանությունն անմշակ, բացերով ու Յերություններով բնորոշվող մի վիճակ ե ներկայացնում իր թէ ծրագրի, թէ բովանդակության ու մեթոդների կողմից։ Յեվ Յեվրոպայում, յեվ Ամերիկայում նա գեր վորոնումների շրջանն ե ապրում։ Այդպիսի վիճակի պատճառը միայն մասամբ մանկաբանության նոր գիտություն լինելովը կարելի յե բացատրել։ Այդպիսի վիճակի գըտխավոր պատճառը բարեժուական մանկաբանության իդեոլոգիա-

հան և մեթոդոգիական հիմքերի եկլեկտիկ, յերերուն և սխալ դրսթյունն եւ Մանկաբանությունը Յեվրոպայում և Ամերիկայում բուրժուական գիտություններից մեկն եր, ՀԻԽ դարի յերկորդ կիսի բուրժուական գիտություններին ընդհանուր կրիզիսին յենթարկված:

Խորհրդային մանկաբանությունն ել ավելի նոր գիտություն եւ սրա սկիզբը դրվում եւ մեր որերում խորհրդային խոշոր կենտրոնների մի շարք հիմնարկների գիտական-հետազոտական աշխատանքներովը: Բայց գիտությունը Խորհրդային Սիության մեջ ոժաված և այն մեծ առավելությունովը, վոր ունի իր ճիշտ, վորոշակի ու բեղմնավորիչ մեթոդորդիական հիմքերը: Այդ հիմքերը հաստատ դրավական են հանդիմանում՝ խորհրդային մանկաբանության առողջ, արագ և փայլուն զարգացմանը: Այդ հիմքերը մարգարմի, դիալեկտիկ մատերիալիզմի սկզբունքներն են այն ձևակերպմամբ, վորը ավել և Վ. Ի. Լենինը, մարգարմի վոչ միայն վերակենդանացնողը, այլ նաև ավելի առաջ տանողը, խորացնողն ու ավելի բարձր աստիճանի հասցնողը (Ստալին): «Տեսությունը, յեթե նա խկական տեսություն եւ, գործողներին տալիս եւ կողմնորոշման ույժ, հեռանկարի պայծառություն, վստահություն աշխատանքում՝ մեր գործի հաղթանակի համար» (Ստալին): Աշխատանքի աջող տեսական հիմնավորումը մեծ և նպաստավոր կարևորություն ունի վոչ միայն գործարանական տեխնիկայի և եկոնոմիկայի ասպարեզներում, այլ նաև գիտական հետազոտական աշխատանքի գործում:

Ըսկ Ստալինը շեշտելով տեսականի կարեվորությունը գործ նականի, առանձնապես ոսցիալիստական շինարարության՝ աշջող ընթացքի համար, միևնույն ժամանակ արձանագրել եր, վոր մեզանում տեսական միտքը, տեսական աշխատանքները յետ են մնում, չեն հասնում մեր գործնոտկան աշխատանքների առաջինադարձան յետելից: Դժբախտաբար, այդպիսի մի յետամացություն տեղի ունեն մանավանդ մանկաբանության ասպարեզում: Վոչ միայն բուրժուական մանկաբանությունը, այլ նաև Խորհրդային Սիության մեջ առաջին տարիներում կատարված մանկաբանական ուսումնասիրություններն ու աշխատանքները՝ չերին կարող հարկավոր չափով բավարարել վոչ հասարակական կյանքին կապվելու, վոչ գասակարգայնության, վոչ կուսակցականության պահանջներին, վորոնք այնքան բնորոշ են ու ծանրակշիռ մեզանում:

Խորհրդային յերկրներում մշակվող մանկաբանության անպատճառությունն է: Մանկաբանությունը Յեվրոպայում և Ամերիկայում բուրժուական աշխատանքները այն են յեղել, վոր նա բավարար չափով ու գիտակցութեն առողջված չել յեղել մարգարենինիցան մեթոդորդիայով, — վոր մասամբ կտրված եր յեղել սոցիալիստական շինարարության պրակտիկայից, — վոր հարկավոր քննադատական վերաբերմունքը չեր ունեցել գեպի բուրժուական մանկաբանությունը: Խոկըրութուական նախապաշարմունքների դեմ առաջության մեջ պայքարելով ե, վոր կարելի յե ամբապնդել մարգարմ-լենինիզմի հիմքերը» (Ստալին): Յեկ խորհրդային մանկաբանությունը վերջին տարիները բուրժուական մանկաբանության ավանդներից ու ազգեցությունից վորոշակի ու կտրուկ ազատազրվելու և նոր, սեփական մարգարմ-լենինիցան հիմունքներովն ու մեթոդներովը վերակառուցվելու ուղին ե բոնիլ, և հուսալից քայլեր ե անում այդ ուղղությամբ: Կուս. Կենտկոմի 1931 5/IX, XVII Կուս. Կոնֆերենցիայի (1932 I-II) և Կուս. Կենտկոմի 1932 25/VIII վորոշումները խորհրդային մանկաբանության համար բովանդակալից ու հեղինակավոր զեկավար ուղեցույցներ ու հրահանգներ են՝ կոնկրետ և սկզբունքներին:

Հայաստանում մանկաբանական աշխատանքներ կատարվում են մի քանի հիմնարկներում՝ Լուս Փողկոմատի և Առողկոմատի գծերով և համարյա թե միայն Յերեվանում ու Լենինականում: Մեզանում սա մի բոլորովին նոր գործ ե, վորի լայնութեն զարգացնելու կարեվորությունը դեռ նոր պետք ե ընդունվի:

Մանկաբանական առանձին հիմնարկների միջև մեղանում սերտ կապ ու ակտիվ գործակցություն հաստատելը մի հրամայակուն պահանջ ե, վորն արդեն զգացվել եր մեր այդ հիմնարկների աշխատակիցների կողմից: 1931 թ. մայիսին Յերեվանուական Դպրությանի վարիչ Դ. Դանիելյանի ձեռներեցությամբ, Մանկաբանական Ինստիտուտի վարիչ Ա. Հովսեփյանի հետ մշակեցինք նույն աշխանը հրավիրվելու նախազգված մանկաբանական խորհրդակցության կազմի ու որակարգի ձրակիրը: Այդ խորհրդակցությունը, սակայն, տեղի չունեցավ: Նույն այդ գիտակցված պահանջին ընդառաջ գնալու գիտավորության արդյունք ե անշուշտ ներկա Մանկաբանական Կոնֆերանսը, վորը կազմակերպել ե Պետ. Համալսարանի Մանկաբանական Գիտահետազոտական Ինստիտուտը, հրավիրելով մեր մանկաբանական հիմնարկների մասնակցությունը: Այսպիսի կանֆերանսները, խորհրդակցությունները,

այս գործակցությունը անշուշտ-մեծապիս նպաստելու յին մանկաբանական գործը մեզանում ճիշտ ու արդյունավետ առաջտանելուն և զարգացնելուն:

Մանկաբանական աշխատանքները միզանում վարվում են խորհրդային խոշոր կենտրոնների—Մոսկվայի և Լենինգրադի—համապատասխան հիմնարկների կողմից մշակվող և գործադրվող ծրագրների և մեթոդների որինակներովը։ Մակայն կուլտուրական շինարարության այս բնագավառում ել աշխատանքների ընդհանուր և հիմնական խորհրդային բովանդակությունը վորոշ գեղագերում կարիք ե լինում տեղային և ազգային ձեվերով կերպավորելու. կրավորաբար ընդորինակելը վոչ թե հարազատություն, այլ աղճատում կարող ե առաջ բերել նման վորոշ դեպքերում։ Բայց սկզբունքային կողմին ու հիմունքներին հավատարիմ մատով ձեփակոխություններ անելը պատասխանատու և զատ անգամ նաև դժվարին մի գործ ե, վորի ճիշտ, անսխալ կատարման համար գրավական կարող են լինել նման խորհրդակցություններ։

Անհրաժեշտ ե, վոր պարբերաբար և վորոշ ժամկետերում մանկաբանական խորհրդակցումներ կատարվեն մանկաբանական աշխատանք տանող մեր բոլոր հիմնարկների մասնակցությամբ։ Փոխադարձաբար իրազեկ անեն իրենց աշխատանքների ծրագրի, ընթացքի և արդյունքների մասին։ արտադրական պլանների միասնական մշակում կատարեն միևնույն տեսակի աշխատանքների միորինակ ու համաձայնեցրած յեղանակներ մշակեն։ իրար փորձերը փոխադարձաբար ողտագործեն։

Լեն. Մանկաբանական Կարինետի կողմից վողջունելով Պետ. Համալսարանի Մանկաբանական Ինստիտուտի այս ուղղությամբ արգած այս առաջին քայլը, հուսով ենք, վոր սրանով սկիզբն և զրվում Խորհրդային Հայաստանում մանկաբանական աշխատանքների առաջիկա բեղմնավոր կուեկտիվ գործակցությանը։



